Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 30-ի N 948 - Ն որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՌԱԴԻՈՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Իրականացնող մարմինը | Իրականացման ժամանակահատվածը | Իրականացման պատասխանատուն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Թվային հեռուստառադիոհեռարձակման ներդրման ծրագրի տեխնիկական, տնտեսական ու ֆինանսական սցենարների մշակում և հաստատում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2011 թ. սեպտեմբեր | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| 2. | Ներկայումս գործող անալոգային հեռարձակման հան-րապետական ցանցի ենթակառուցվածքների ֆիզիկա-կան վիճակի և տեխնիկական հագեցվածության ուսումնասիրում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ (համաձայնությամբ) | 2011 թ. 3-րդ եռամսյակ | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն |
| 3. | Ծրագրի նախագծային աշխատանքների պատվիրում համապատասխան մասնագիտական կառույցին (մրցույթի հիման վրա) և նախագծից բխող աշխատանքային նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի պատրաստում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2011 թ. 3-րդ եռամսյակ | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն |
| 4. | Մասնագիտական կառույցի կողմից նախագծային | մասնագիտական կառույց | 2011 թ. | ՀՀ տրանսպորտի և կապի |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | աշխատանքների կատարում, փորձաքննության իրականացում և պատվիրատուի կողմից ընդունում | պատվիրատու կազմակերպություն (համաձայնությամբ) | 4-րդ եռամսյակ | նախարարություն |
| 5. | Թվային հեռուստառադիոհեռարձակման ազգային ստանդարտների մշակում և ընդունում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ<br>«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ) | 2011 թ.<br>4-րդ եռամսյակ | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| 6. | Ծրագրի ֆինանսական (ներդրումային) եղանակի ընտրություն, տեխնիկական առաջադրանքի կազմում, թվային հեռարձակման ցանցի կառուցման համար կապալառու կազմակերպության ընտրություն (մրցույթի հիման վրա) և պայմանագրի կնքում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ (համաձայնությամբ) | 2012 թ.<br>1-ին եռամսյակ | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| 7. | Թվային հեռուստառադիոհեռարձակման համակարգի ներդրմանը պետական աջակցության ծրագրի մշակում և այն ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2012 թ.<br>1-ին եռամսյակ | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն |
| 8. | Թվային հեռարձակման հանրապետական ցանցի կառուցում, թեստավորում և կարգաբերում՝ ըստ հետևյալ փուլերի՝ | «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ (համաձայնությամբ) | պայմանագրի կնքման ժամկետ + 24 ամիս | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն |
| | 1-ին փուլ՝<br>Կենտրոն՝ քաղ. Երևան, ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզեր | «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ<br>կապալառու կազմակերպություն (համաձայնությամբ) | պայմանագրի կնքման ժամկետ + 10 ամիս | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն |
| | 2-րդ փուլ՝<br>Հյուսիս՝ ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Տավուշի | «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ | պայմանագրի կնքման ժամկետ + 18 ամիս | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | մարզեր | կապալառու կազմակերպություն (համաձայնությամբ) | | |
| | 3-րդ փուլ՝<br>Հարավ՝ ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզեր | «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ<br>կապալառու կազմակերպություն (համաձայնությամբ) | պայմանագրի կնքման ժամկետ + 24 ամիս | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն |
| 9. | Ծրագրի կապալառու կազմակերպության կողմից թվային ցանցի շահագործում, սպասարկում և տեխնիկական անձնակազմի վերապատրաստում | «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ<br>կապալառու կազմակերպություն (համաձայնությամբ) | ցանցի ներդրման փուլերի ամբողջ ընթացքը + 1 տարի | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն |
| 10. | Անալոգային հեռարձակման անջատում և ցանցի ապամոնտաժում | «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ<br>կապալառու կազմակերպություն (համաձայնությամբ) | 2014 թ.<br>4-րդ եռամսյակ | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ